

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԻՒԻԱ ԱՐՈՒԱՅՆ—ՎՐԱՅ ԵՎ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ IX—X ԴԱՐԵՐՈՒՄ

Ուսումնասիրություն և տեքստեր (վրաց. լեզվով), Թբիլիսի, 1944, վիմատիպ, X+0208+274 էջ, ՎՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Իվ. Ջավախիշվիլու անվան Պատմության ինստիտուտի հրատարակություն, խմբագիր՝ Եկազե-միկոս Ա. Շեմիճե

Մեր առաջին և հայ-վրացագետ Ռիտա Արուստիսի «Վրաց և հայոց գրական կապերը IX—X դարերում» վերնագիրը կրող նոր, սովորածավալ գիտական աշխատությունը, խիստ հետաքրքրություն ներկայացնող այս աշխատությունը բաղկացած է ուսումնասիրությունից (01—0208 էջ), ուսումնասիրության ննթարկված տեքստերից (1—175 էջ), հավելվածից (175—186 էջ), ծանոթագրություններից (187—201 էջ), Աստվածաշնչից վերցրած մեղբրումներից (203—216 էջ), տեքստերից բխող վրաց-հայերեն և հայ-վրացերեն բառարանից (217—274 էջ)։ Ընդամենը՝ 482 մեծա-գիր էջ։

Ռիտա Արուստիսի տվյալ աշխատանքով իր ուսումնասիրության նյութն է դարձրել IX—X դարերում թարգմանված ինչպես հայերենից վրացերեն, այնպես էլ վրացերենից հայերեն գրական լուսարձանները։ Այդ հուշարձաններից՝ «Հայերենից թարգմանված վարժագրական հուշարձանները» վեր-նագրի տակ (հայոց և վրաց տեքստերն իրար կողք-կողքի) բերում է հետե-վյալները՝ 1. «Վկայութիւն սրբոյն Սանգիտոյ զստերն Սանատրկոյ Արքայի» (3—8 էջ), 2. «Վկայութիւն սրբոյն Ոսկեայ և Ընկերաց նորա» (9—21 էջ), 3. «Վկայութիւն սրբոյ Բաւշից որ վկայեցան ի Բաղրևանդ զաւառի ի Սուկաւէտ լեռոն» (22—61 էջ), 4. «Վկայութիւն սուրբ Հայրապետացն հա-յոց Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի, Դանիէլի» (62—68 էջ), 5. «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայրապետին և Խաղայ եպիսկոպո-սին» (69—79 էջ), 6. «Կատարումն սրբոյն Սահակայ Պարթևի» (80—84 էջ), 7. «Վկայութիւն սրբոյն Վարդանայ և Հմայեկայ և Վահանայ և Սա-հակայ Հայոց Սպարապետաց և ամենայն սուրբ արանց որ մեռան ի Քրիս-տոս» (85—94 էջ), 8. «Վկայութիւն սրբոյն Շուշանկայ» (որ հիշատակված է ու չի զետեղված այդ բաժնում՝ առանձին զրքով հրատարակված լինելու պատճառով), 9. «Վկայութիւն սրբոյն Ատոմայ և Որդւոյ նորա Վարոսայ և Ներսէի և Նոցին Ընկերացն որ ի Քրիստոս նահատակեցան. զոր ասացեալ է հաւր Տաճատայ Վարդեցւոյ» (95—113 էջ), 10. «Վկայարանութիւն սրբոյ

Յիզտիրուդտեայ» (114—123 էջ), և 11. «Վկայաբանութիւն սրբոյն Դաւթի որ ի Դուին կատարեցաւ ճշմարիտ խոստովանութեամբ» (124—132 էջ)։ Իսկ, ընդհակառակը, «Վրացերենից թարգմանված վարձագրական հուշարձանները վերնագրի տակ (վրաց և հայոց անբաստերը կողք-կողքի) բերված է միայն մեկը՝ «հեանք Դիոնեսիոսի որդւոյ Սոկրատայ և զլխատորի Քթենացւոց որ կոչի քաղաք իմաստասիրաց» (133—147 էջ)։ Այնուհետև նմանապես «Հայերենից թարգմանված մեկնաբանական հուշարձանը» վերնագրի տակ բերված է՝ «Երանելւոյն Լույսիփանու՝ Սաղմոսաց մեկնութիւն» (148—175 էջ)։ Ընդամենը 13 զրական հուշարձան, որից՝ 12-ը հայերենից վրացերեն թարգմանված, իսկ մեկը՝ վրացերենից հայերեն։

Պրական այս հուշարձանների հրատարակման զրգապատճառը հեղինակի համար եղել է հետևյալը. վրացերենի հետ կապ ունեցող հայոց զրական հուշարձաններից գրեթե և ոչ մեկը քննադատորեն հրատարակված չի եղել։ Վարձագրական հուշարձաններից միայն «Վկայաբանութիւն սրբոյն Յիզտիրուդտեայ»-ն է պատշաճ կերպով հրատարակված՝ P. Peeters-ի կողմից, մասամբ էլ՝ «հեանք Դիոնեսիոսի» հայերեն թարգմանությունը Ն. Ակի-նյանի հրատարակությամբ (ուշ ժամանակի ձեռագրերի համաձայն)։ Մնացածը «Սոփերք Հայկականք» սերիայով է հրատարակվել։ Իսկ Ահարոն Վանանդեցու աշխատությունը դարձյալ ձեռագրերի մեջ էր մնում։ Մեկնաբանական և աստվածաբանական-փիլիսոփայական բնագավառի նմուշները, որ ինքը՝ հեղինակն է հրատարակում, մինչև օրս չէին հրապարակվել։ Այս բոլոր հանգամանքներից ստիպված՝ հեղինակը, ինչպես ինքն է ասում, ձեռք է դարկել դրանց քննադատական հրատարակությանը՝ հնարավորին չափ օգտագործելով հայոց բոլոր «ձառնախրները»։

Ահա թե ինչու է հրապարակում և իր ուսումնասիրության նյութը դարձնում հեղինակը I X—X դարերի զրական այդ հուշարձանները։ Նա իր ուսումնասիրած նյութը բաժանել է հետևյալ զլուխներին՝ I. Երաժուցյուն (01—018 էջ), II. Աղբյուրների և առարկայի վերաբերյալ եղած զրականության քննությունը (018—037 էջ), III. Վրաց և հայոց թարգմանությունների ժամանակը (037—046 էջ), IV. Թարգմանություններ կատարող և այդ օգտագործող շրջանները և նրանց բնակավայրը (046—063), V. Վարձագրական թարգմանություններ կատարող շրջանների ինքնուրույն ստեղծագործությունը վրաց լեզվով (063—076), VI. Հայերեն թարգմանությունների ժամանակը, տեղը և ստեղծագործող շրջանները (070—072), VII. Վրացերեն թարգմանությունների նշանակությունը նրանց հայերեն բնագրերի ուսումնասիրության գործի համար (072—080), VIII. Վրացերեն թարգմանությունների բառապաշարը (081—0111), IX. Ընդհանուր բառերի և հատուկ անունների զրոնորումները թարգմանությունների համաձայն (0111—0119), և X. Թարգմանված հուշարձանների առանձին-առանձին քննարկումը (0119—0199)։

Վերջին՝ X զլուխը, այն է՝ հայերենից թարգմանված վրացերեն վարձագրական հուշարձանները՝ հեղինակը բաժանում է չորս հնարավոր մասի։ Առաջին մասը, ըստ հեղինակի, կապվում է հայոց առաջին լուսավորիչ ճանաչված Խաղեոս առաքյալի քարոզչական գործունեության հետ։ Երկրորդ մասը վերաբերում է հայոց ընդհանուր լուսավորիչ, խոստովանյալ Պրիգոր Պարթևացու ժամանակների և նրա տոհմակիցների նահատակ-գործիչ-

ների վկայարանությունը (առաքելությունը)։ Երրորդ մասը նկարագրում է մարդպանական Հայաստանի ժամանակի պարսից կողմից հալածված հայ գործիչների անձնուրացությունը, իսկ վերջինը, այսինքն՝ չորրորդ մասը վերաբերում է արաբների տիրապետության սկզբնական ժամանակների նահատակներին։

Առաջին մասի մեջ առնված գրական հուշարձաններից, որոնք Քաղեոս առաքյալի անվան հետ են կապված, հեղինակը վերցնում է երեքը՝ 1. «Վկայություն սրբոյն Սանգիստոյ դստերն Սանատրկոյ Արքայի», 2. «Վկայարանություն սրբոյն Ոսկեայ և ընկերաց նորա», և 3. «Վկայարանություն սրբոյն Բաւշիցն, որք վկայեցան ի Բագրևանդ գաւառի ի Սուկաւէա լեւոն» (առաջին պատճառով նկարագրում է հայոց Սանատրուկ թագավորի դստեր և Քաղեոս առաքյալի աշակերտ Սանդուխտի վկայարանությունը, երկրորդը՝ Հայաստան եկած և այստեղ Քաղեոսի կողմից դարձ կատարած հույն դեսպանների վկայարանության նկարագրությունն է տալիս, իսկ երրորդը այդ հույն դեսպանների գլխավորի՝ Ոսկի կողմից դարձ կատարած այն ոսերի վկայարանությունն է նկարագրում, որ Սաթենիկ թագուհու հետ եկան օսերի երկրից Հայաստան, երբ նա Արտաշես հայոց թագավորին կնություն գնաց)։

Հայերենից թարգմանված վրացերեն վարձպրական հուշարձանների երկրորդ մասի մեջ, որ Դրիգոր Լուսավորչի տոհմակից քահանայապետների վկայարանական-վարձարանական գրվածքներն են, նույնպես երեք հուշարձան է առնված՝ 1. «Վկայարանություն սուրբ Հայրապետաց հայոց Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկան, Դրիգորիսի, Դանիէլի», 2. «Պատմություն սրբոյն Ներսիսի Հայրապետին և Սադայ եպիսկոպոսին», և 3. «Կատարումն սրբոյն Սահակայ Պարթևի»։

Վրացերեն թարգմանված հայոց մարտիրոսագրական գրքերի երրորդ մասը վերաբերում է Պարսից կողմից հալածված ղոհներին, որոնք մարդպանական Հայաստանի ժամանակ նահատակվել են։ Այս մասի մեջ է առնված գրական չորս հուշարձան՝ 1. «Վկայարանություն սրբոյն Վարդանայ, Հմայեկայ և Վահանայ և Սահակայ Հայոց սպարապետաց և ամենայն սուրբ արանց որք մեռան ի Քրիստոս», 2. «Վկայարանություն սրբոյն Շուշանկայ», 3. «Վկայարանություն սրբոյն Առոմայ և որդւոյ նորա Վարոսայ, և Ներսէի և Նոյին ընկերացն, որ ի Քրիստոս նահատակեցան. գոր ասացեալ է հաւր Տաճատայ Վարագեցւոյ», և 4. «Վկայարանություն սրբոյն Յիդտիրուկտեայ»։

Չորրորդ մասից, այն է՝ արաբների տիրապետության սկզբնական շրջանի նահատակների հայոց մարտիրոսագրական գրքերից վրացերեն փոխադրված թարգմանությունների մեջ պահպանված է միայն մեկը՝ «Վկայարանություն սրբոյն Դաւթի, որ ի Դուին կատարեցաւ ճշմարիտ խոստովանութեամբ»։

Վրացերենից հայերեն թարգմանությունները վարձագրական են. սրբանցից շատ քան չկա հրապարակի վրա, բայց այն, ինչ որ գոյություն ունի, վկայում է այն մասին, ինչպես հեղինակն է ասում, որ այն ժամանակ էլ թարգմանություններ կատարվել են նաև վրացերենից և, ուրեմն, հայոց և վրաց գրական-կուլտուրական կապերը փոխադարձ են եղել։ Առաջմ գրական երկու հուշարձան է հայտարարված IX—X դարերում վրա-

ցերենից հայերեն թարգմանված՝ 1. «Գեանք Դիոնեսիոսի որդւոյ Սոկրատայ և զլիսաւորի Աթենացւոց որ կոչի քաղաք Իմաստասիրաց», և 2. «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկայ-Յակոբ Յուրաւելու»։ այս վերջինը, ինչպիսի հեղինակն է ասում, ոչ թիւ ամբողջովին է թարգմանված հայերեն լեզվով, այլ քաղվածքներ են կատարված, որ օգտագործվել են մի այլ աշխատանքի համար որպէս բաղկացուցիչ մասեր։

Այստեղ՝ վրացերենից հայերեն թարգմանված տեքստի կազակցութեամբ պետք է նշել, որ հեղինակն իր ուսումնասիրության մեջ՝ Տ. զլխում (0172—0181 էջ) քննարկել է, ըստ տեքստերի բաժնում, համապատասխան տեղում, չի դետեկել, այսպիսի կոչված, «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկայ» Յակոբ Յուրաւելու ստեղծագործությունը։ Վրացերենից հայերեն թարգմանված հուշարձանների բաժնում, գիտեղոված առաջին և միակ տեքստի վերջում (էջ 147) կարդում ենք հեղինակի հետևյալ տողատակի ծանոթագրութիւնը։ «Սրանից հետո, հաջորդ հուշարձանը կտայինք Յակոբ Յուրաւելու ստեղծագործության»։ Ահարոն Վանանդեցու կատարած հայերեն թարգմանությունը, եթե ձեռքի տակ ունենայինք»։

Մինչդեռ, միաժամանակ, «հայերենից վրացերեն թարգմանված հուշարձանների բաժնում» էլ, Թ-րդ հուշարձանի մաս (էջ 95), նորից տողատակի ծանոթագրութեան մեջ կարդում ենք հետևյալը. «Նախքան այս՝ պետք է դետեկված լինէր Թ-րդ՝ «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկայ...» (համառոտ գիրքը), որն արդեն հրատարակել ենք (տես՝ Յակոբ Յուրաւելու Մարտիրոսութիւն Շուշանկայ... Թբիլիսի, 1938, էջ 49—53)»։

Ուսումնասիրութեանից (0153—0156 և 0172—0181 էջերում) երևում է, որ հեղինակը Շուշանկի նախադրութեան համառոտ գիրքը, նմանօրինակ հայերեն մարտիրոսագրութեան թարգմանությունն է ներկայացնում, քննութեան է ենթարկել Յակոբ Յուրաւելու ստեղծագործության կապակցութեամբ և հրապարակել վրացերեն հին թարգմանությունն ու նրա հայերեն քննարկը՝ իրար կողք-կողքի։ Այդ ուսումնասիրության մեջ հեղինակն աշխատել է պարզել այն հարցը, թե ի՞նչ աղբյուրներից է ծագել նախատակութեան այդ գիրքը և ի՞նչ փոխադրութեան կա այդ գրքի և նախադրութեան ընդարձակ վրաց-հայերեն գրքերի միջև։ Մանրամասն քննութեան է առնված այն տեսակետը, որ վերջին ժամանակներն արտահայտել էր Շուշանկի նախադրութեան յուրիշ բնութագրի հայտնի արևելագետ Ք. Peeters-ը, հատկապես նրա այն գիտողութիւնը, որի համաձայն Յակոբ Յուրաւելու անունով հայտնի վրաց նախադրութեան գիրքը գրված է ոչ թե V դարում, այլ շատ ուշ, 940 թվին, հայերենից թարգմանված համառոտ վկայաբանութեան գրքի արձագանքով և, ուրիշն. նրա ի հայտ գալուց հետո։ Հեղինակը համապատասխան նյութի վերլուծութեան հետևանքով աշխատում է Ք. Peeters-ի ասածի հակառակն ապացուցել... Բայց՝ հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանված գրական հուշարձանների բաժնի ներքինում հեղինակի տված տողատակի ծանոթագրութեաններից այն ապավորութիւնն ենք ստանում, ինչ որ արտահայտել է Ք. Peeters-ը։ Ուստի անհրաժեշտ էր՝ տեքստերի բաժնում էլ, թեկուզ ծանոթագրութեանների մեջ՝ հեղինակն ավելի ցայտուն տարբերակում զներս։

Հեղինակի ուսումնասիրության Տ. զլխում (0182—0193 էջ) մեկնաբանական ստեղծագործությունը, որ հայերենից վրացերեն թարգմանված է

IX—X դարերում, հետևյալն է. «Երանելուն Եպիփանու» Սաղմոսաց մեկնությունը, որ թարգմանված է ոչ թե ամբողջ ղերբբը, այլ միայն գրքի մի շնչին մասը՝ 15 սաղմոսի մեկնությունը։

Եվ վերջապես՝ աստվածաբանական փիլիսոփայական հուշարձանը, որ X դարում հայերենից թարգմանված է վրաց լեզվով, հետևյալն է՝ «Գրիգորի Աստուածաբանի (VՅԷ. եպիսկոպոսի) Նաղարացույ՝ առ Եւնոմիացիսն»։ Հայերեն այս տեքստը, ինչպես հեղինակն է ասում, բաղմաթիվ վարիանտներով է պահպանված ձևագրերի մեջ, իսկ ինքը՝ հեղինակը օգտվել է մեր Մատենադարանի № 1500, № 3495 և № 3294 ձեռագրերից, սակայն սրանց վրացերեն, թարգմանությունը պահպանված է այն ժողովածուում, որը պահվում է Վրաստանի պետական թանգարանում։ Ձեռագիրն անթվակիր է հեղել բայց գրչին նայելով՝ XI դարի թարգմանություն է համարվում։ Այս նախ-վրացերեն տեքստերն էլ իրար չհամընկնելու պատճառով հեղինակը, ընականաբար, չի տալիս տեքստերի բաժնում։

Այսպիսով, հեղինակն իր այս ուսումնասիրության մեջ քննություն է առել ընդամենը 15 գրական հուշարձան (թեև տեքստերի բաժնում զետեղված է միայն 13-ը)։ Այդ 15 հուշարձանից 13-ը հայերենից վրացերեն թարգմանություն է, իսկ երկուսը՝ վրացերենից հայերեն։

Անստիճան ընդհանուր առմամբ այն հուշարձանները, որոնք քննությունից անտարկա է դարձրել հեղինակը իր տվյալ աշխատության մեջ։

Հայոց և վրաց գրական կապերը, — ասում է հեղինակն իր ներածության մեջ (I գլուխ, 01—018 էջ), — երկարատև պատմություն ունեն։ Գրական այդ կապերը կարող ենք հաշվի առնել միայն այն ժամանակից, որ ժամանակից օրդեն հայոց և վրաց գրական հուշարձանները հասել են մեզ։ Առաջին այդ հուշարձանների ստեղծագործության ժամանակը պատմական աղբյուրների տվյալների (մանավանդ հայերեն աղբյուրների տվյալների) համաձայն հայոց և վրաց գիր ու գրականության հիմնադրման ժամանակից այն կողմը չի անցնում։ Իսկ դա, ինչպես հայտնի է, մեր քվակալության V դարի սկիզբն է։

Հայոց և վրաց գրական կապերը հնում (V—XIII դարերում) իրենց զարգացման տեսակետից հեղինակը երեք աստիճանի է բաժանում, որ անշուշտ պայմանական է։ Առաջին աստիճանը համարում է V դարից մինչև VIII դարի վերջը, երկրորդը՝ IX—X, իսկ երրորդը՝ XI—XIII դարերը։ Այս բաժանումը նա կատարում է՝ հիմք ունենալով ինչպես այդ կապերը դրսև-վորող գրական հուշարձանների քննության, այնպես էլ պատմական միջավայրը և աշխարհագրական շրջապատը, որոնց մեջ զարգացել են գրական այդ կապերը։ Այսպիսով՝ այն դարաշրջանը, որը հեղինակն իր ուսումնասիրության նյութն է դարձրել, երկրորդ աստիճանին է վերաբերում, այն է՝ IX—X դարերին։

Հիշյալ ժամանակի գրականությունը մեծ մասամբ եկեղեցական լինելով՝ հայ-վրացական գրական կապերը դրսևորող հուշարձաններն էլ հիմնականում վարքագրական են։ Վրացերենի համար սա դարձանալի չէ, քանի որ Քարթլին և այն էլ նրա այն մասը, որ Ներքին Քարթլի էր կոչվում և քրիստոնեական գրականության ստեղծման օրրանն էր հանդիսանում, մոտ հարաբերության մեջ էր իր սահմանակից Հայաստանի հիմնական կուլտուրական կենտրոնների հետ։

Տեղեկագիր 3—4 — 10

Միայն այդ բնագավառի գրական հուշարձաններով էին շահագրգռված այն ժամանակվա վրացական շրջանները, Նայելով գրական հուշարձանների ուսումնասիրության այսօրվա աստիճանին, ինչպես երևում է, այն ժամանակ մեծ մասամբ վրացերենն է եղել հայերենից կախված, բայց որ հայերենն էլ վրացերենից որոշ կախում է ունեցել, այդ մասին վկայում են վարժագրական մի շարք հուշարձաններ, Այսպիսով, ուրեմն, նայոց և վրաց գրական հարաբերությունները ճշգրտվեցին շրջաձևերում էլ եղիլ են փոխադարձ:

VIII—X դարերում վրաստանում, ինչպես հայանի է, աեղի են ունենում մեծ տեղաշարժեր, VIII դարում արարներն սկսում են վրաստանը նվաճել, նրանք իրենց տիրապետությունը կարողանում են առավելապես Արևելյան վրաստանում հաստատել, քան թե Արևմտյան վրաստանում (Արևադիայում) և հարավ-արևմտյան ծայրամասերում (Տայքում և Գղարջքում), Նույն արարները VII դարի վերջերին և VIII դարի սկզբներին իրենց արշավանքներն են սկսում նաև Հայաստանի նախարարությունների վրա: Քաղաքական դրության հետ միասին ծանրանում է նաև հայոց և վրաց ժողովուրդների տնտեսական կացությունը, որ արտահայտվում է երկրի բոլոր բնագավառներում: Հայ նախարարներն ու վրաց էրիսթավները, երբ չէին կարողանում հաշտվել արաբական քաղաքականությանը, այլևս չէին կարողանում մնալ իրենց բնակավայրերում: Նրանք հաճախ իրենց ընտանիքներով տեղահան էին լինում և ապաստանում ավելի ապահով տեղերում (կամ Բյուզանդիայում և կամ լեռնային անմատչելի վայրերում):

Այդպիսի տեղերից են համարվել այն ժամանակվա Տայքը և Կղարջքը: Մինչև VI դարի վերջերը Տայքը պարսից տիրապետության տակ էր, իսկ 591 թվին նա անցնում է Բյուզանդիայի ազդեցության տակ: Այսպիսով, Տայքը համեմատաբար ավելի ազատ էր արաբների ինչպես հաճախակի ասպատակումներից, այնպես էլ նրանց տնտեսական ու քաղաքական ճնշումներից:

Այստեղ է, որ VII—VIII դարերում զալիս է ինչպես հայ, այնպես էլ վրացի նոր բնակչություն՝ Հայաստանի և վրաստանի տարբեր վայրերից գաղթած: Այդտեղ է, որ IX—X դարերում հաստատվում են հայոց և վրաց գրական սերտ կապերը:

VIII դարի կեսերին Տայքի բնակչության թվին, որ այն ժամանակ հիմնականում հայերից կամ հայացած այլ տարրերից էր կազմված, ավելանում է նաև Միջին և Ներքին Քարթլուց գաղթած վրացի նոր բնակչությունը: Այնտեղ հավաքված այն ժամանակվա կուլտուրական ուժերը, չնայած արաբների կատարած ընդհանուր ավերածություններին, այնուամենայնիվ սկսում են հիմնել նոր վանքեր կամ եղածը վերանորոգել և տանել ստեղծագործական մեծ աշխատանք: Նրանց գրական ստեղծագործությունները, թեև տարբեր լեզուներով, բայց իրար հետ սերտ փոխհարաբերության հետևանքով, իրարից կարված չէին:

Այսպիսով, ինչպես հեղինակն է հաստատում, IX—X դարերում կատարվում են հայերենից վրացերեն, մասամբ էլ վրացերենից հայերեն, գրական հուշարձանների թարգմանություններ: Որ այն ժամանակ երկու լեզվով էլ կատարվել են թարգմանություններ, այդ փաստ է (զեռ այսօր էլ այս կամ այն չափով, պահպանված են համապատասխան թարգմանությունները): Բայց թե ովքեր և ինչ պատճառով են կատարել այդ թարգ-

ժանութիւնները, հեղինակի հարցադրումը, իմ կարծիքով, որոշակի պարզութիւն չունի։ Ահա թե ինչու։

Տայքի և Կղարջի հայութիւնը, որ VIII դարի վերջերից «վրաց տիրապետութեան տակ» է մանուկ, այդ ազդեցութեան տակ, ըստ հեղինակի, հնագին անկում է միաձուլվել վրաց զանգվածներին և վրացաձայն։ Այն, ինչ որ նա սանդղադրած էր և հասկանալի էր իրեն մինչ այդ իր մայրենի լեզվով, այժմ այլևս անհասկանալի էր դարձել։ Անհրաժեշտ էր, ուրեմն, գրական այդ հուշարձանների թարգմանութիւնն ավելի հասկանալի լեզվով, այս դեպքում՝ վրաց լեզվով։ Այդպիսի թարգմանութիւններից հեղինակը համարում է հայերեն վարքագրական հուշարձանները, իսկ հետագայում Տայքի և Կղարջի հայութիւնը գրական այդ հուշարձանների մեջ նույնիսկ իր լուծան է մուծել ուղղակի վրաց լեզվով։

Հեղինակի կարծիքով, այն ժամանակվա Տայքի և Կղարջի հայութիւնը վրացականացման ճանապարհի վրա էր կանգնած և եթե մայրենի լեզուն հասկանալի էր նրան, ապա զա ոչ թե գրական, այլ խոսակցական լեզուն էր։ Այսպիսով, ուրեմն, ինչպես կարծում է հեղինակը, այն ժամանակվա գրական հուշարձանների հայերենից վրացերեն թարգմանութիւնները կատարված պետք է լինեն վրացականացած հայերի կողմից՝ քննադրելով հասկանալու համար։ Նա իր այս կարծիքն աշխատում է հիմնավորել հետևյալ փաստարկումներով՝ թարգմանութիւնների լեզվով, ոճով և որոշ արտահայտութիւններով. այսպես, օր՝ «Պատմութիւն Սրբոյն Ներսիսի» վրաց թարգմանութեան մեջ Հայաստանը մի շարք անգամ անվանված է «Ներկիր մեր», որ այս ձևով, ինչպես հեղինակն է կարծում, դժվար թե վրացի թարգմանիչը պահպաներ։ Այսպես նաև՝ «Վկայարանութիւն Շուշանկայ» թարգմանութեան մեջ հայոց առաջնագույն հոգևոր հայրերը հորջորջված են «Մեր լուսավորչութեան մեղավորները», որ նմանապես, ըստ հեղինակի, անհամապատասխան արտահայտութիւն է վրացի թարգմանչի համար։ Իսկ «Վկայարանութիւն Դաւթի» վրաց թարգմանութեան մեջ Ներսես Մեծ կաթողիկոսը կոչված է «Մեր սուրբ հայրը», որ միայն հայ թարգմանիչը կարող էր կոչել, ըստ հեղինակի։ Բացի այս արտահայտութիւններից՝ հեղինակը, իր կարծիքը հիմնավորելու համար, բերում է գրական հուշարձանների լեզուն, առաջին հերթին՝ բառապաշարը, մասնավորապես առանց թարգմանելու թողած հայերեն բառերը (մեծ մասամբ տերմինները) և ապա՝ հայկական ուճերը, որոնք թույլ են տրված թարգմանչի կողմից։ Այդ տանալով ոճերը, ըստ հեղինակի, կարող էր թույլ տալ դարձյալ հայ թարգմանիչը՝ վրաց լեզուն պատշաճ չափով չիմանալու պատճառով։

Հեղինակի այս նույն փաստարկումներով, եթե հաշվի չառնենք բուն պատճառը, իմ կարծիքով, կարող ենք և հենց իրեն՝ հեղինակին հակադրվել։ Հատկապես վրացերեն թարգմանութիւնների անհարթ ոճերը, առանց թարգմանելու թողած հայերեն առանձին բառերը (տերմինները), ոճերը և այլն՝ հայերենից վրացերեն թարգմանութիւն կատարելիս կարող էր թողնել ոչ միայն հայ թարգմանիչը, որ պատշաճ չափով հայերեն չի իմացել, այլ կարող էր, թերևս, թողնել հենց թեկուզ վրացի թարգմանիչն էլ, ընդհանրապես, հայերենը լավ չիմանալու պատճառով։ Հայ թարգմանիչը եթե հայերեն չիմանար, պարզ է, որ հայերենից թարգմանութիւններ չէր կարող

կատարել և այն ժամանակվա երկու ժողովրդի գրական-կուլտուրական կապերը, իրար լեզուն չիմանալուց զուրս, դժվար է պատկերացնել:

Հայերի կողմից հայերենից կատարված վրացերեն թարգմանությունները, իմ կարծիքով, հայերի վրացականացումով և նրանց՝ հին հայերենի մոռացումով չպետք է բացատրել: Այստեղ, ինչպես ցույց է տալիս և հեղինակը, կա անշուշտ այն հիմնական պատճառը, որ, ինչպես հայտնի է, զուլիս է այն ժամանակվա պաշտամունքի ու կրոնական հողի վրա կատարվող, այսպես կոչված, երկսրենակների և միաբնակների պայքարից: Ահա թե ինչու երկարակ հայերը, որ իրենց կրոնա-եկեղեցական հայացքներով հակադրվում էին միաբնակ հայերին և միաժամանակ հարուստ վրաց եկեղեցուն և կրոնին, կատարում են, ընականաբար, հայերեն տեքստերի թարգմանությունները վրաց լեզվով:

Բավական մեծ նետաքրքրություն է ներկայացնում հիշյալ *Երևան* ախրություն VIII գլուխը, այն է՝ վրացերեն թարգմանությունների բառապաշարի քննությունը: Հեղինակը քննություն է առել IX—X դարերում վրացերեն թարգմանված գրական հուշարձանների բառապաշարը, երա կարծիքով՝ հայոց և վրաց ընդհանուր գործածության բառերը ծագումով միայն հայերենը կամ վրացերենը չեն, այլ նրանց մեծ մասը հաճախ «տառ» աղբյուրներից է գալիս: Իսկ այդ աղբյուրները առաջին հերթին այն լեզուներն են, որոնցով խոսող ժողովուրդների հետ հնում հարաբերությունների մեջ են եղել իրար հարևան հայերն ու վրացիները: Հայոց և վրաց ընդհանուր գործածության բառերի և բառարմատների օտար այն աղբյուրը, որ համեմատաբար հեշտ է գտնել, հիմնականում իրանական և սեմիտական լեզուներն են՝ հունարենի հետ միասին: Սրա հետ համեմատած՝ թվով ավելի քիչ են գուտ հայ-վրացական բառերը: Մինչդեռ ավելի քան շատ է ընդհանուր բառերի այն մասը, որ հիշյալ լեզուներից չի գալիս, այլ րաշոր մի ուրիշ, զեռուս անհայտ աղբյուրից:

Այս տեսանկյունով էլ հեղինակը կատարում է հայոց և վրաց ընդհանուր բառերի բաժանումը՝ ա. իրաներենից եկող հայ-վրացական ընդհանուր բառերը (որի տակ բերում է 39 բառ), բ. հունարենից եկող վրաց-հայերեն ընդհանուր բառերը (25 բառ), գ. սեմիտերենից եկող հայ-վրացական ընդհանուր բառերը (9 բառ), դ. հայերենից եկող բառերը (10 բառ), ե. քարթական լեզուներից հայերենին անցած բառերը (6 բառ), և Վ. անհայտ ծագում ունեցող հայ-վրացական ընդհանուր բառերը (-0 բառ):

Ի՞նչ հիմունքով է կատարել հայոց և վրաց ընդհանուր բառերի բաժանումը Հեղինակն այդ բաժանումը կատարել է գրեթե այնպես, ինչպես, օրինակ, սովորաբար կատարել են Նախորդ, հնդեվրոպական գիտնականները: Այդ հիմունքով, օրինակ, իրաներենից, սեմիտերենից (և այլ լեզուներից) անցած բառերը, որոնք զրավոր շրջանին են վերաբերում, սովորաբար ճիշտ բաժանման են ենթարկված: Հայոց և վրաց լեզուների իրար անցած բառերն էլ, որոնք նույնպես զրավոր շրջանի պատմություն ունեն, կարող են նույնպես ճիշտ բաժանման ենթարկվել, իսկ հայ-վրացական այն ընդհանուր բառերը, որոնք, այսպես ասած, նախազրավորյալ են, դժվար է և նույնիսկ անկարելի նրանց բաժանումը կատարել: արդյոք հայերենից են վրացերենին անցած, թե՛ վրացերենից՝ հայերենին, դժվար է ասել: Հաճախ միևնույն հիմունքներով այդ բաժանումը կատարող երկու գիտնական,

ինչպես ինքը՝ հեղինակն էլ է ասում, իրար հակադիր կարծիք են արտահայտում այս կամ այն բառի ծագման մասին. օրինակ՝ ակադեմիկոս Հ. Աճառյանը կալ, ցեխ-ցեխել, լորձն, խոց-խոցել բառերը հայերենից է անցած համարում վրացերենին, իսկ H. Vogl-ը, ընդհակառակը, այդ նույն բառերը վրացերենից է անցած համարում հայերենին:

Պարզ է, որ այսպիսի հակադրություններ միշտ էլ անխուսափելի կլինեն, եթե մենք աշխատենք հայոց և վրաց ընդհանուր բառերը, որոնք նույնպես չըջանից են դալիս, մեկ կամ մյուս լեզվի «սեփականությունը» համարելու իրոք. դրանք երկու լեզվի այնպիսի ընդհանրություններ են, որոնք պալիս են դեռևս, ինչպես ն. Մանն է ասում, նախա-արիական (հաբթական) լեզուներին: Սրտնք են, անշուշտ, հայոց և վրաց լեզուների այդ ընդհանուր բառերի աղբյուրը, մի աղբյուր, որ գոյացել է նախորդ րազմաթիվ մեռած լեզուներից և այսօր այլևս չկա, բայց նա երբեմնի բնական ներթափանցումների և խաչավորումների հետևանքով՝ ղեռ այսօր էլ վերապորում է հայոց և վրաց լեզուներում: Այսպիսով, ուրեմն, այդ աղբյուրը ոչ հայկական է և ոչ էլ վրացական, այլ ընդհանուր է երկուսի համար էլ, քանի որ ընդհանրապես «մաքուր» լեզու գոյություն չունի աշխարհի երևաին, որպեսզի այս կամ այն լեզվատարը նրա «մաքուր սեփականությունը» (և նրանից ծագած) համարենք: Այլ գոյություն ունեն խառը լեզուներ կամ, այսպես ասած, խաչավորված լեզուներ, ինչպես, օրինակ, հայոց և վրաց լեզուները:

Ն. Մանը հայոց և վրաց լեզուները ազգակից լեզուներ է համարում. հայերենը իր նախա-արիական (հաբթական) լեզվաշերտով տեղական ծագում ունի և ազգակից է հաբթական լեզուներին, առաջին հերթին՝ քալ-թական լեզուներին (վրացերենին, ճաներենին, միգրելերենին և սվաներենին), որոնք հաբթական լեզուների ժառանգներն են: Այս է պատճառը, որ երկու լեզվի ընդհանուր բառերը երբեմն նույնիսկ ստուգարանում են քարթական այն բառերով, որոնք պահպանել են իրենց հնագույն նշանակությունները. այսպես, օրինակ, հյ. ծալ-առ բառը հաբթական ծագում ունի և, իմ կարծիքով, պետք է անմիջապես կապել ճան. ռալ-(|| ձկալ-) «ջուր» բառի հետ, և ոչ թե, ինչպես H. Vogl-ն է արել՝ հեղինակի վկայակոչումով, վրց. ռղ ուր- (წყურ-) «ծառով» բառարմատի հետ, որը նմանապես, իր հերթին, իհարկե, կապված է առաջինի (ձկալ- || ծալ- թուրս բառի) հետ: Այսպես նաև՝ հյ. կիմ-ք բառը պետք է անմիջապես կապել սվան. կիմ-ի «հուր» բառի հետ և ոչ թե, ինչպես ակադեմիկոս Հ. Աճառյանն է համեմատել, վրց. ուկանա (կուան- || կուալ-) «հետև» բառի հետ, որ իր հերթին, անշուշտ, կապված է առաջինի հետ: Հյ. ցալ-ոտ գաղապան» (կամ ըստ «Առձեռն»-ի՝ «ձեծի պրծիք՝ պես-պես») բառի արմատն է, անշուշտ, ցալ- և կապվում է մեզր. ցա || ցալ-«ծառ» բառի հետ... և այլն:

Սա դեռևս չի նշանակում, թե այնպիսի բառեր (օր՝ ծորուռ, կիմբ, ցալուռ ևլն), որոնք վրացերենով կամ քարթական լեզուներով են ստուգաբանվում, պետք է, անշուշտ, վրացերենից փոխառյալ բառեր համարել հաբթերենի մեջ: Այլ սրանք այնպիսի ընդհանուր բառեր են, որոնց հնագույն նշանակության վերապրուկները գեո այսօր էլ համեմատաբար ավելի թարմ պահպանել են քարթական լեզուները:

Մյուս կողմից էլ՝ փաստերով չի արդարացվում այն տեսակետը, որի

համաձայն հայոց և վրաց լեզուների ընդհանուր բառերի մի մասը, որ այս եամ այն չափով հապկում է «հնդեվրոպական» արմատների հետ, անշուշտ, հայերենից պեսք է համարել փոխառյալ վրացերենի մեջ: Փաստերը հաճախ բոլորովին էլ այդ չինն ցույց տալիս: Օր՝ տիկ րառը հայերենում «հնդեվրոպական» է համարվում՝ նախապես «այծա» նշանակությամբ: Մենք այդ րառը դանում ենք քարթական և մյուս կողմասյան լեզուներում՝ իր նախնական «այծա» կամ ընդհանրապես որոշ տեսակի «կենդանի» նշանակությամբ, որ բառակառուցվածքի տեսակետից (երբեմն քերականական սեռի և դասի մասնիկներով) շատ հնագույն է քարթական և ընդհանրապես կովկասյան լեզուներում: այսպես, օր.՝ բա-տիկ-ի || բա-տկ-ի || բա-տկ-ան-ի, տիկ-ան-ի || քիկ-ան-ի || ցիկ-ան-ի, վա-ցիկ-ի || վա-ցի || քուր-ցիկ-ի և այլն, բոլորն էլ «այծա», այծիկ, գառ, կենդանու ձագ և այլն» իրար շատ մոտ ընդհանուր նշանակություներով (առբերակիչ քերականական սեռի կամ դասի հնագույն մասնիկներով հանդերձ): Տիկ բառարմատը արդյոք հայերենից է վրացերենին անցած, ինչպես կարելի էր մտածել տիկ բառի ինչ-որ «հնդեվրոպական» ծագումից ելնելով: իհարկե, ոչ: Սա, անշուշտ, հաբեթական բառ է և ընդհանուր է հայոց և վրաց լեզուներում (վրացերենում այդ րառը պահպանելով իր նախնական՝ կենդանու նշանակությունը, իսկ հայերենում՝ տվյալ կենդանուց կենդանու մարթու զազափարին անցնելով):

Այս կարգի հարցադրումով և խնդրի լուծումով մեայն, իմ կարծիքով, ի վիճակի կլինենք էլ ավելի խորամուխ լինելու հայոց և վրաց լեզուների, իրոք, այն ազգակցության ուսումնասիրության մեջ, որ առաջ է քաշել Ն. Մառը և աշխատել է ապացուցել իր բազմաթիվ աշխատությունների մեջ:

Տվյալ աշխատության մեջ, հայոց և վրաց լեզուների ընդհանուր բառերի բաժնում, որտեղ այդ բառերը հրկու լեզվում էլ ոչ թե ձևա-իմաստային, այլ միայն իմաստային համարժեքներով են զրոհորված (էջ 0109), հեղինակն այսպիսի, իմ կարծիքով, ոչ ճիշտ համադրություն է կատարել: վրց-ծոֆ-ո (բիծ-ի) բառին, որ հյ. քիծ «արատ, ախտ» բառն է, հեղինակը, որպես իմաստային համարժեք, հյ. «անարատութիւն» բառն է գույադրել, որը, ինչպես տեսնում ենք, իր նշանակությամբ ճիշտ նրա հակառակն է: Գուցե հայ-վրացական զուգակից տեքստերում, տարբեր կապակցություներին մեջ, դրանք իրար համընկել են, բայց այդ դեռևս չի նշանակում, թե իրար հակառակ նշանակություն զրոհորող բառերը (քիծ և անարատութիւն) պետք է դնել այն բառերի շարքում, որոնք զուգակից են իրար իրենց նշանակությամբ:

Իմ արած այս մի հրկու գիտողությունը բնավ էլ չեն նսեմացնում իլիա Արուստանի ներկա՝ «վրաց և հայոց դրական կապերը IX—X դարերում» վերնագիրը կրող աշխատանքը: Նա, անկասկած, օժտված է շատ արժանիքներով: Դա մի աշխատանք է, որով, անշուշտ, ի հայա են բերված հրկու հարևան եղբայրակից ժողովուրդների՝ հայերի և վրացիների այն ժամանակվա դրական-կուլտուրական փոխադարձ կապերը (հակառակ այն սխալ տեսակետի, որ ամեն ինչ աշխատել է ղիտել միակողմանի): Այս տեսակետից էլ տվյալ աշխատանքի, որպես հայ-վրացագիտության բնագավառում կատարված լուրջ աշխատանքներից մեկի, ուսումնասիրությունը կարևոր է և անհրաժեշտ ինչպես վրացագետի, այնպես էլ հայագետի համար:

Ա. ՄՈՒՐՎԻԼՅԱՆ